
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ



ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024

Ուղեցույցի նպատակն է տեղեկացնել Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող և ժամանակավորապես օտարերկրյա պետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց տրամադրվող արտոնությունների մասին

ԻՐԱՁԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող և ժամանակավորապես օտարերկրյա պետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձը մաքսային վճարներից ազատման ինչպիսի արտոնությունից կարող է օգտվել.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող և ժամանակավորապես օտարերկրյա պետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձը (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձ) կարող է առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով Հայաստանի Հանրապետություն ներմուծել 5000 Եվրոն չգերազանցող արժեքով անձնական օգտագործման ապրանքներ՝ ՀՀ կառավարության սահմանած բնաիրային չափերը չգերազանցող քանակներով :

Ուշադրություն.

- ✓ Արտոնությունը կիրառելի չէ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների թափքերի ներմուծման նկատմամբ:
- ✓ Նշված արտոնության շրջանակներում կարող են ներմուծվել նաև չօգտագործված ապրանքներ:

2. Մաքսատուրքերի հարկերի վճարումից ազատմամբ (այսուհետ՝ արտոնություն) անձնական օգտագործման ապրանքներ ներմուծելու համար՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձինք, ինչպիսի միաժամանակյա պայմանների բավարարումը պետք է ապահովեն.

Արտոնությունից հնարավոր է օգտվել հետևյալ պայմանների միաժամանակյա ապահովման դեպքում.

- ապրանքները ՀՀ տարածք են տեղափոխվել ուղեկցող և (կամ) չուղեկցող ուղեբեռով.

- ապրանքների ՀՀ տեղափոխման փաստով զուգորդված Հայաստանի Հանրապետություն ժամանման օրվան նախորդող 420 օր տևողությամբ ժամանակահատվածում առնվազն 12 ամիս անձը բնակվել է օտարերկրյա պետությունում,

- արտոնության տրամադրման նպատակով անձը Հայաստանի Հանրապետություն ժամանելու օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում գրավոր դիմում է ներկայացրել մաքսային մարմին՝ դիմումին կցելով օտարերկրյա պետությունում բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը:





3. Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձի կողմից ներմուծվող ո՞ր անձնական օգտագործման ապրանքներին է տրամադրվում արտոնությունը.

Արտոնությունը տրամադրվում է ուղեկցող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով ներմուծվող՝ 5000 Եվրոն չգերազանցող արժեքով ապրանքներին, որոնք չեն գերազանցում և ՀՀ կառավարության կողմից սահմանված ստորև ներկայացվող բնաիրային չափերը.



- կենցաղային և անձնական օգտագործման սարքեր՝ յուրաքանչյուր տեսակից 2 հատ;
- անձնական գործածության իրեր՝ յուրաքանչյուր տեսակից 10 հատ,
- այլ տնային գույք՝ յուրաքանչյուր տեսակից 6 հատ:

4. Ի՞նչ հաճախականությամբ է հնարավոր օգտվել արտոնությունից.

Անհրաժեշտ է իմանալ, որ նշված արտոնությունից անձը կարող է օգտվել երեք տարվա ընթացքում մեկ անգամ:

5. Կարող է արդյոք անձը միաժամանակ օգտվել թե Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ճանաչված կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց համար նախատեսված և թե Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող և ժամանակավորապես օտարերկրյա պետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց համար նախատեսված արտոնությունից:

Անձը կարող է օգտվել նշված արտոնություններից միայն մեկից:





ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ